Ռաֆֆի

Կիրթ ճաշակ

Ես չեմ սիրի սովդաքար
Ու չեմ գնա բազազին,
Որ աստուծո ողջ օրը
Ջոռ է տալիս իր գազին:

Եվ գիշերն անհանգիստ
Նրա չոթքի չրկչրկոց,
Մարդի զահլա է տանում
Դաֆթարների ողջ կապոց:

Գնա՛, կորչե՛ սովդաքար
Իր փողի սնդուկներով,
Նրա արծաթը չէ բերում
Այրված սրտիս հանգիստ զով:

Ես չեմ սիրի փեշաքար
Ու չեմ գնա ոսկերչին,
Նրա զոհարը չէ արժում
Սիրուն աղջկա մի պաչին:

Խիստ ագահ է ոսկերիչ,
Թեև ոսկու հետ խաղում
Եվ ժանգակեր մետաղից
Իր օգուտն է նա քաղում:

Գնա՛, կորչե ոսկերիչ,
Նա է նույնպես մեքենա,
Որպես իր մուրճն ու փուքսը,
Որով իր գործը գործե նա:

Ես չեմ սիրի քահանա,
Ու չեմ գնա տերտերին,
Նա որսում է շիլափլավ
Սնունդ տալու իր փորին:

Եվ գիշերն անդադար
Նրա սաղմոս, շարական
Չեն իմ ականջներին
Անուշ ձայներ դուրեկան:

Թո՛ղ կորչե տեր Մարկոսը,
Նա մի քուրմ է կեղծավոր,
Եվ իր մաշտոց, տոնացույց
Շինեց ուռկան զորավոր:

Ես չեմ սիրի չինովնիկ,
Թեև ծերուկ գեներալ.
Թո՛ղ թե, ուներ նա գյուղեր,
Հարյուր հազար իմպերիալ:

Ես զզվում եմ նայելով
Նրա ահագին քըթին.
Ուր սպիտակ բեղերը
Դեղին է ներկել բուռնոթին:

Գնա՛, կորչե՛ չինովնիկ,
Ինձ զարհուրանք է բերում,
Եվ արյունոտ ձեռքերեն
Մահվան հոտ է միշտ բուրում:

Ես կըսիրեմ ստուդենտ,
Մի նորահաս ուսանող,
Սիրո պաշտող մտերիմ,
Գեղեցկության է հարգող:

Թեև նա ման է գալիս
Հին հագուստով, կոշիկը ծակ,
Պանդոկումը պարտք ունի,
Եվ գրպանն է միշտ դատարկ:

Բայց սրտումը կիրք ունի,
Բորբոքվում է նոր կյանքով,
Երակներումը վազում է
Արյունը ջերմ հոսանքով:

Երբ իմ առջև ծնկաչոք
Մորմոքում է՝ նա լացում,
Եվ ախտալից աչերեն
Տաք արտասուք է բացում:

Քանի՛ ազդու հայտնություն,
Որքա՛ն անուշ հրապույր,
Երբ քաղում է իմ թըշեն
Մի վարդենի տաք համբույր…

Կեցցե՛, կեցցե՛ ուսանող,
Նոր սերունդը մարդկության,
Ես իմ անձն և իմ սեր
Նրան կըզոհեմ հավիտյան: